

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/03-01»**

ք. Երևան

« 18 » դեկտեմբերի 2020 թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Եսայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **31 օր**:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում՝ Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժնումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **53 248 200 (հիսուներեք միլիոն երկու հարյուր քառասունութ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ**, որից 8 874 700 (ութ միլիոն ութ հարյուր յոթանասունչորս հազար յոթ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՎՈՒԹՅԱՆ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և

¹ Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա. տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանման վաճառվող ապրանքների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում՝ սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 34 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.12 **Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:** Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:



9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դադրական դեպարտամենթ
Հասցե՝ ք. Երևան, Կոյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ -
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱԳԱԹ-777» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
ՀՎՀՀ՝ 01807983
Հ/Հ՝ 1150000285850100
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

/ստորագրված է 4.5.2017 թ.՝


Տնօրենի պաշտոնակատար՝ Կ. Գրիգորյան



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ /ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (3 ՀԱՐԿ) և ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ (4 ՀԱՐԿ) ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ/ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Քանակ	Միավորի արժեքը /ՀՀ դրամ/	Ընդամենը /ՀՀ դրամ/
1	2	3	4	5	6
	1-1. Ընդհանուր շինարարական աշխատանքներ				
	Քանդման և ապամոնտաժման աշխատանքներ				
1	Մետ.պլաստե պատուհանի, պատուհանագոգերի ապամոնտաժում շեպերի քանդումով	մ ²	3.22	600	1932
2	ՄԴՖ-ով երեսապատված դռների ապամոնտաժում շեպերի քանդումով	մ ²	1.89	400	756
3	Խարամաբլոկներից պատերի քանդում ճ=100մմ	մ ²	4.6	400	1840
4	Խարամաբլոկներից պատերի քանդում ճ=200մմ	մ ³	2.4	400	960
5	Քարե պատերի կազմատում	մ ³	0.6	9000	5796
6	Առկա կեռամոգրամիտե սալիկների քանդում	մ ²	12.0	1000	12000
7	Լամինատե հատակի քանդում	մ ²	6.0	900	5400
8	Ցեմենտավազային հարթեցնող շերտի քանդում 2սմ հաստության	մ ²	18.0	1000	18000
9	Մետաղական դռան ապամոնտաժում	մ ²	1.44	9000	12960
10	Շին աղբի բարձում ձեռքով ա/մ 4.5մ3	տ	8.1	2500	20250
11	Տեղափոխում 15կմ հեռավորության վրա	տ	8.1	2000	16200
12	Առկա բնահողի կտրում ձեռքով 60սմ հաստության 72,0մ ²	մ ³	43.2	2000	86400
13	Բնահողի հավաքում և տեղափոխում շենքից դուրս	տ	76.0	2000	152064
14	Բնահողի բարձում ձեռքով ա/մ	տ	76.0	2000	152064
15	Տեղափոխում 15կմ հեռավորության վրա	տ	76.0	2000	152064
	ԸՆԴԱՄԵՆԸ				638686
	Կոնստրուկտորական մաս				
1	Միաձույլ ե/բետոնե հիմնային գոտու կառուցում B20 դասի բետոնով, ամրանների տեղադրումով	մ ³	6.0	105380	632280
2	Փ14A500c դասի ամրանի արժեքը	տ	0.232	320000	74336
3	Փ10A500c դասի ամրանի արժեքը	տ	0.011	320000	3456
4	Փ8A240C դասի ամրանի արժեքը	տ	0.108	350000	37800
5	Չեղույս Փ20A1, տեղադրումով	կգ	43.4	700	30380

6	Միաձույլ ե/բետոնե սալի իրականացում B20 դասի բետոնով, ամրանների տեղադրումով	մ ³	10.0	68000	680000
7	Փ10A500c դասի ամրանի արժեքը	տ	1.08	320000	345600
8	Փ8A240C դասի ամրանի արժեքը	տ	0.059	350000	20475
9	Խճային շերտի իրականացում , տոփանումով, մինչև 95% Պրոկտորի ցուցիչի	մ ³	26.0	12000	312000
10	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում h=100մմ B12,5 դասի	մ ³	6.5	45000	292500
11	Միաձույլ ե/բետոնե զոտու կառուցում B 20 դասի բետոնով , ամրանների տեղադրումով	մ ³	1.50	66500	99750
12	Ցանց Ց-1 Փ8A500C դասի ամրանի արժեքը	տ	0.082	320000	26240
13	Մետաղական ամրակապման տարրեր անձրևաջրերի հեռացման փթեղի համար, տեղադրումով L 50x50,Փ16A500C	տ	0.73	500000	364800
14	Անցքերի շաղափում Փ18մմ L=320մմ	հատ	128	200	25600
15	Մետաղական սյուներ, տեղադրումով ՄՍ-1 160x160x8, -16x300 L=300մմ, -12x75 L=150մմ	տ	1.13	500000	566800
16	Մետաղական հեծաններ, տեղադրումով ՄՅ-1 ՄՅ-2 160x120x8	տ	0.84	500000	419900
17	Կապող դետալներ, տեղադրումով	տ	0.047	500000	23400
18	Մետաղական հիմնակմաղք, տեղադրումով ՄՅ-1 ՄՅ-2 160x80x6, 120x60x4, -7x100 L=120մմ	տ	1.64	500000	818925
19	Մետաղական ճաղավանդակների-1, 2,3կառուցում պողպատե խողովակներից, տեղադրումով 50x25x3, 20x20x2, L50x50x4	տ	0.72	500000	358750
20	Ներդիր տարրեր , տեղադրումով	կգ	121.5	600	72900
21	Անցքերի շաղափում Փ16մմ L=150մմ	հատ	148	200	29600
22	Պաշտպանիչ ցանցի պանել -1,2 տեղադրումով L 75x5, 4x12x60,Փ6A240C	տ	0.873	500000	436500
23	Մետաղական պաշտպանիչ ցանց, տեղադրումով Փ3Bp-1 ք. 50x50մմ	մ ²	110.0	5000	550000
24	Մետաղական կոնստրուկցիաների երկշերտ ներկում հակակոռոզիոն ներկով	մ ²	180.0	3000	540000
	ԸՆԴԱՄԵՆԸ				6761992
Ճարտարապետական մաս					
<i>հատակներ</i>					
1	Ջրամեկուսիչ շերտի իրականացում 2 շերտ իզոգամով, բիտումի մաստիկայի կիրառմամբ	մ ²	117.0	4100	479700
2	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստության	մ ²	117.0	2100	245700
3	Պրեսգրանիտե լավորակ չսահող սալերով հատակի իրականացում ամրացված սոսնձով՝ 60x60 չափսերի h=10մմ, տեղադրումով	մ ²	117.0	11500	1345500
	<i>Ներքին հարդարում</i>				0
1	Վնասված տեղերում պատերի և առաստաղների սվաղում գաջի շաղախով	մ ²	25.5	2400	61200
2	Առաստաղի ծեփամածկի հարթեցնող շերտ լատեքսային ներկածածկով, տեղադրումով	մ ²	25.5	1800	45900
3	Պատերի սվաղի իրականացում ցեմենտավազային շաղախով M150	մ ²	22.5	2400	54000
4	Պատերի ծեփամածկի հարթեցնող շերտ լատեքսային անփայլ ներկածածկով, տեղադրումով	մ ²	22.5	1800	40500
	<i>Բացվածքներ</i>				
1	Այլումինե պատուհաններ, տեղադրումով, 1 տակ ապակի, բացվող	մ ²	1.20	24000	28800
2	Նույնը, չբացվող	մ ²	6.80	12000	81600
3	Պլաստիկ պատուհանագոգերի (b=300մմ)	մ	4.0	3000	12000

	արժեքը				
4	Ներքին ալյումինե վիտրաժ ,մեկ տակ ապակի (թրծած ապակի 6մմ հաստությամբ) լայն պրոֆիլ՝ 60մմ, ետ քաշվող լծակով, սպիտակ, առանց շեմի, բացվող	մ ²	4.0	15000	60000
5	Նույնը, չբացվող	մ ²	2.76	35000	96600
6	Մեխանիկական ետ քաշվող լծակ (առեկար), տեղադրումով արտաքին վիտրաժների համար	հատ	2	20000	40000
7	Արտաքին ալյումինե վիտրաժ՝ ճակատային պրոֆիլ՝ 60մմ ,տեղադրումով (ապակու հաստությունը 6մմ - հակաբեկորային ամրանավորված), գույնը մոխրագույն, ներառյալ հենարանային համապատասխան կոնստրուկցիաներ՝ ապահովելով ջրանթափանցելիությունը	մ ²	79.5	110210	8761695
Տանիք					
1	Անձրևաջրերի հեռացման իրականացում ցինկապատ հարթ թիթեղով $\delta=0,7$ մմ	մ ²	45.0	6500	292500
2	Կաթիլաթափի իրականացում ցինկապատ հարթ թիթեղով $\delta=0,7$ մմ $L=20,0$ մ $b=30$ սմ	մ ²	6.0	6500	39000
3	Անձրևաջրերի հեռացման խողովակ $\Phi 150$	մ	1.4	3500	4900
Արտաքին հարդարում					
					0
1	Արտաքին պատերի սվաղի իրականացում ցեմենտավազային շաղախով M150	մ ²	25.0	3000	75000
2	Արտաքին պատերի ծեփամածիկի հարթեցնող շերտի իրականացում և ներկում՝ ճակատային ներկով առկա շենքի երանգով ,երշերտ	մ ²	115.0	1900	218500
3	ALUCOBOND, համապատասխան կարկասով, տեղադրումով	մ ²	8.0	18000	144000
4	Բետոնե աստիճանների կառուցում B15 դասի բետոնով	մ ³	2.15	95000	204250
5	Աստիճանների երեսապատում կերամոզրանիտե սալիկներով $d=10$ մմ, ցեմենտավազային շաղախի վրա	մ ²	9.0	18000	162000
6	Մետաղական ցանց, տեղադրումով Bp-3մմ ք. 50x50մմ 1մ2-2.24կգ սալիկների տակ 9,0 մ ²	կգ	20.16	600	12096
7	Պատերի մեջ ճեղքի բացում	մ	16.0	4000	64000
8	Բազալտե զլխադիրի տեղադրում $d=50$ մմ $b=550$ մմ $L=20,0$ մ	մ ²	11.0	19000	209000
9	1 շերտ իզոգամի իրականացում ավազի պաշտպանիչ շերտով, բիտումի մաստիկայի կիրառմամբ	մ ²	280.0	2500	700000
10	Տեղադրել անցակետային պտտվող սարք երկանցումային ներառյալ ա. սնման աղբյուր հաստատուն հոսանքի 12Վ - 1հատ բ. ընդունիչ որը միանում է ղեկավարման կետին - 1հատ գ. ազդանշանման սարք - 1հատ	հատ	1	1885582	1885582
11	Մետաղական բազրիքների տեղադրում, չժանգոտվող նիկելապատ խողովակից	տ	0.012	800000	9600
ԸՆԴՄԵՆԸ					15373623
1-2. Կաթսայատան քերմամեխանիկական մաս					
1	Պողպատե էլեկտրաեռակցված խողովակներ $\Phi 89 \times 3,5$, տեղադրումով	զմ	90.0	5400	486000
2	Պողպատե էլեկտրաեռակցված խողովակներ $\Phi 76 \times 3$, տեղադրումով	զմ	10.0	5400	54000
3	Պողպատե էլեկտրաեռակցված խողովակներ $\Phi 57 \times 3$, տեղադրումով	զ.մ	40.0	5400	216000
4	Պողպատե խողովակ $\Phi 32$ մմ, տեղադրումով	մ	20.0	5400	108000

5	Պողպատե ջրագազատար խողովակ $\Phi 25$ մ, տեղադրումով	մ	15.0	5400	81000
6	Պողպատե ջրագազատար խողովակ $\Phi 20$ մ, տեղադրումով	մ	5.0	5400	27000
7	Պողպատե ջրագազատար խողովակ $\Phi 15$, տեղադրումով	զմ	5.0	3500	17500
8	Պողպատե սողնակ $\Phi 80$, կցաշուրթ 4հատ, տեղադրումով	հատ	2.0	35000	70000
9	Սողնակ $\Phi 80$ 30x476p2, կցաշուրթ 10հատ, տեղադրումով	հատ	5.0	30000	150000
10	Սողնակ $\Phi 65$ 30x476p2, կցաշուրթ 16հատ, տեղադրումով	հատ	8.0	25000	200000
11	Փական $\Phi 25$, տեղադրումով	հատ	5.0	3000	15000
12	Փական $\Phi 20$, տեղադրումով	հատ	9.0	2800	25200
13	Փական $\Phi 15$, տեղադրումով	հատ	1.0	2500	2500
14	Հետադարձ փական $\Phi 80$, տեղադրումով	հատ	2.0	30000	60000
15	Հետադարձ փական $\Phi 65$, տեղադրումով	հատ	2.0	25000	50000
16	Հետադարձ փական $\Phi 25$, տեղադրումով	հատ	1.0	2000	2000
17	Ապահովիչ կափույր $\Phi 32$, տեղադրումով	հատ	2.0	3000	6000
18	Մանոմետր եռաքայլ փականով P=10ՄԹ, տեղադրումով	հատ	3.0	4000	12000
19	Ջերմաչափ, տեղադրումով	հատ	3.0	4000	12000
20	Խողովակների յուղաներկում 2 անգամ	100մ ²	0.30	120000	36000
21	Ավտոմատ օդահատ $\Phi 20$, տեղադրումով	հատ	2.0	8500	17000
22	Համակարգի փորձարկում	մ	185.0	300	55500
23	Կրակմարիչ ածխաթթվային, տեղադրումով	հատ	2.0	25000	50000
24	Հակահրդեհային կահավորման կոմպլեկտ, տեղադրումով	կ-տ	1.0	60000	60000
25	Հակահրդեհային ծորակ, տեղադրում	կոմպլ.	1	10000	10000
	Ա. Փականի արժեքը $\Phi 50$	հատ	1	12000	12000
	Բ. Վուշե հակահրդեհային ճկափող $d=50$ L=15մ (1հատ) արժեքը	մ	15.0	800	12000
	Գ. Ծայրակալի արժեքը	հատ	1	3000	3000
	Դ. Կցորդման գլխիկի արժեքը	հատ	1	3000	3000
	Ե. Հրդեհաշիջման պլաստիկ պահարանի արժեքը (814x814x192)	հատ	1	27000	27000
26	Մետաղական տարրեր խողովակների ամրակապման համար	կգ	60.0	1000	60000
27	Պողպատե ձևավոր մասեր, տեղադրումով	կգ	150.0	600	90000
28	Կոյուղու պոլիէթիլենային խողովակ ներառյալ ձևավոր մասեր $d=50$, փորձարկումով	մ	3.0	2900	8700
	ԸՆԴՄԵՆԸ				2038400
	1-3. Կաթսայատան սարքավորումներ				
1	Ջրատաքացուցիչ կաթսա Q=250կՎտ հզորությամբ, ջերմատարի 80-60 ⁰ C ջերմաստիճանի էջի համար, համալրված ավտոմատ կառավարման բլոկով, տեղադրումով	կ-տ	2	1800000	3600000
2	Ավտոմատ գազային այրիչ 309600կկալ/ժամ, տեղադրումով	կ-տ	2	500000	1000000
3	Ջերմատարի շրջանառության պոմպեր N=3,044տ, G=21մ ³ /ժամ, H=20մ n=2900պտ/րոպե, մոնտաժային կոմպլեկտով, տեղադրումով	կ-տ	2	200000	400000
4	Կաթսաների ջերմատարի շրջանառության պոմպեր (հակակոնդենսացիոն) G=3,2մ ³ /ժամ, H=4մ, N=0.544տ, n=2200պտ/րոպե, մոնտաժային կոմպլեկտով, տեղադրումով	կ-տ	1	200000	200000

5	Սառը ջրի սնուցման պոմպ H=25մ, Q=2.5մ ³ /ժամ N=1.5կՎտ մոնտաժային կոմպլեկտով, տեղադրումով	կ-տ	1	200000	200000
6	Կեղտազտիչի H=500մմ, D=273, տեղադրումով	հատ	1	50000	50000
7	Էլեկտրամագնիսական ֆիլտր, տեղադրումով	հատ	1	60000	60000
8	Մեմբրանային ընդարձակիչ բաք V=200լ, տեղադրումով	հատ	1	250000	250000
9	Ծխատար խողովակ ջերմակայուն և կոռոզիակայուն d=250x500 պողպատե թիթեղից $\delta=1,0$ մմ L=25.0մ, ամրակապումով , տեղադրումով	մ ²	37.5	15000	562500
10	Ծխատար խողովակ $\Phi 325 \times 6$ մմ L=10մ, տեղադրումով	տն	0.472	700000	330400
11	Ծխատար խողովակի ջերմամեկուսացում հրակայուն 5սմ հաստության բազալտե մանրաթելերից ներքնակով t=700C ⁰	մ ²	45.0	1200	54000
11	Ջերմամեկուսացված ծխատար խողովակների երեսապատում բարակաթերթ պողպատե ցինկապատ թիթեղով , տեղադրումով	մ ²	45.0	1200	54000
13	Յոսակ , տեղադրումով	հատ	1	11000	11000
14	Ջրահեռացման սուզապոմպ H=4,5մ N=0,25կՎտ, Q=60լ/վրկ, տեղադրումով	կ-տ	1	60000	60000
15	Պայթուցանային ապահովիչ փական 400x200, տեղադրումով	հատ	2	120000	240000
16	Ծխատար և օդատար խողովակների ամրակապման տարրեր անկյունակ 32x4 հեղույս 10x30, մանեկ շերտապողպատ	կգ	120.0	600	72000
17	Պեֆլեկտոր $\Phi 500$, տեղադրումով	հատ	1	40000	40000
18	Օդատար ցինկապատ թիթեղից $\delta=0,7$ մմ 300x600 L=18.0մ, ամրակապումով , տեղադրումով	մ ²	32.4	8500	275400
19	Օդատար ցինկապատ թիթեղից $\delta=0,7$ մմ 200x1000 L=8.0մ, ամրակապումով , տեղադրումով	մ ²	19.2	8500	163200
20	Օդափոխության ճաղաշար 200x1000 , տեղադրումով	հատ	8.0	5000	40000
21	Օդափոխության ճաղաշար 300x600 , տեղադրումով	հատ	1.0	4000	4000
	ԸՆԴԱՄԵՆԸ				7666500
	1-4. Կաթսայատան օգգամատակառուում				
1	Պողպատե էլեկտրաեռակցված խողովակից բաշխիչ 2 ելքով $\Phi 159 \times 4.5$ L=2մ, տեղադրումով 1կ-տ	գ.մ	2.0	46000	92000
2	Պողպատե էլեկտրաեռակցված խողովակ $\Phi 89 \times 3,5$, տեղադրումով	գ.մ	15.0	6000	90000
3	Պողպատե ջրազազատար խողովակ $\Phi 40$, տեղադրումով	գ.մ	5.0	6000	30000
4	Պողպատե ջրազազատար խողովակ $\Phi 32$, տեղադրումով	գ.մ	10.0	6000	60000
5	Պողպատե ջրազազատար խողովակ $\Phi 25$, տեղադրումով	գ.մ	6.0	6000	36000
6	Պողպատե ջրազազատար խողովակ $\Phi 15$, տեղադրումով	գ.մ	3.0	6000	18000
7	խողովակ պատյան $\Phi 150$ (1 հատ), տեղադրումով	մ	0.60	6000	3600
8	խողովակ պատյան $\Phi 80$ (1 հատ), տեղադրումով	մ	0.60	6000	3600
9	Պահպանիչ փական $\Phi 80$, տեղադրումով	հատ	1.0	40000	40000
10	Գազի ազդանշանային սարք, տեղադրումով	հատ	1.0	80000	80000
11	Գազի գնդային փական $\Phi 40$, տեղադրումով	հատ	4.0	7000	28000
12	Խցանային փական $\Phi 25$ 11436κ, տեղադրումով	հատ	3.0	7000	21000

13	Խցանային գնդային փական Փ15 11436к, տեղադրումով	հատ	3.0	6000	18000
14	Ս-աձև ջրային մանոմետր, տեղադրումով	հատ	2.0	4000	8000
15	Միացման ճկուն խողովակ Փ40 L=1,0մ, տեղադրումով	հատ	2.0	5000	10000
16	Համակարգի փորձարկում	մ	40.0	500	20000
17	Խողովակների յուղաներկում 2 անգամ	մ ²	12.0	2000	24000
18	Մետաղական տարրեր խողովակների ամրակապման համար	կգ	45.00	900	40500
19	Պողպատե ձևավոր մասեր, տեղադրումով	կգ	25.0	1000	25000
	ԸՆԴԱՄԵՆԸ				647700
	1-5. Կաթսայատան էլեկտրական լուսավորություն				
1	Լուսադիոդային լուսատու պատի՝ ձևը՝ կլոր, 0,495x0,495x0,150մ, 220Վ, 27Վտ լուսայն հոսքը 2831 լյումեն, գունային ջերմաստիճանը 4000K, լուսային արդյունավետությունը՝ ոչ պակաս 95լմ/վտ, գունափոխության գործակիցը՝ ոչ պակաս 80, պաշտպանությունը 1P54 օգտագործման ժամկետը 50000 ժամ, տեղադրումով	լրակ.	14	14000	196000
2	Լուսադիոդային լուսատու պատի, ձևը՝ կլոր, 0.355x0.355x0.212մ 220Վ,36Վտ լուսայն հոսքը 1870 լյումեն, գունային ջերմաստիճանը 4000K, լուսային արդյունավետությունը՝ ոչ պակաս 95լմ/վտ, գունափոխության գործակիցը՝ ոչ պակաս 80, օգտագործման ժամկետը 36 ամիս, տեղադրումով	լրակ.	1	18500	18500
3	Արկղ ցածրացնող տրանսֆորմատորով ЯТП-0.25	կոմպլ.	1	60000	60000
4	Հաղորդալար պղնձե ջիղով, մեկուսացված, բաժանիչ հիմքով, հատվածքը 3x1,5մմ ² ППВ մակնիշի	մ	105.0	250	26250
5	Պոլիէթիլենային էլեկտրատեխնիկական գոֆրե խողովակ Փ15 П15, տեղադրումով	մ	135.0	80	10800
6	Անջատիչ երկտակ, թաքնված տեղադրման համար, 220Վ, 6Ա	հատ	1	2100	2100
7	Խրոցակային վարդակ թաքնված տեղադրման համար, 220Վ, 10Ա	հատ	5	2000	10000
8	Խրոցակային վարդակ ցայտանթափանց 36Վ, 10Ա	հատ	1	3500	3500
9	Տուփ անջատիչների և խրոցակային վարդակների համար Y-196	հատ	7	150	1050
10	Ճյուղավորիչ տուփ Y-994M	հատ	3	1500	4500
11	Երկաթակապ	հատ	167.0	10	1670
12	Հաղորդալար պղնձե ջիղով, մեկուսացված, բաժանիչ հիմքով, հատվածքը 3x1,5մմ ² ППВ մակնիշի (անցակետի պատվող սարքի սնուցում)	մ	30.0	250	7500
	ԸՆԴԱՄԵՆԸ				341870
	1-6. Էլեկտրաուժային սարքավորումներ				
1	Ուժային վահանակ 6x6Ա միաֆազ և 4x6Ա +2x10Ա +1x16Ա+ 1x25Ա եռաֆազ,մուտքային 40Ա ավտոմատ անջատիչներով, տեղադրումով	հատ	1.0	100000	100000
2	Մալուխ պղնձե ջիղով, մեկուսացված, հատվածքը 5x2.5մմ ² ВВГ	մ	12.0	800	9600
3	Մալուխ պղնձե ջիղով, մեկուսացված, հատվածքը 3x2.5մմ ² ВВГ	մ	52.0	550	28600
4	Մագնիսական թողարկիչ ջերմային ռելեով,կոճակով, 380Վ, Jք=6,0Ա	հատ	4	38000	152000
5	Մագնիսական թողարկիչ ջերմային ռելեով, կոճակով, 220Վ, Jք=10,0Ա	հատ	2	28000	56000
6	Ֆազի պաշտպանության ռելե	հատ	1	27500	27500
7	Մետաղական արկղ չափը՝ 800x600x300մմ	հատ	1	35000	35000

8	Պոլիէթիլենային խողովակ $\Phi 20$	մ	64.0	150	9600
9	Երկաթակապ	հատ	55.0	10	550
10	Շերտավոր պողպատ 40x4	մ	55.0	1300	71500
11	Շերտավոր պողպատ 25x4	մ	72.0	1050	75600
12	Պողպատ անկյունային 50x50x5մմ, L=2.5մ	հատ	3	7500	22500
13	Գրունտի քանդում հողանցման համար	մ ³	5.30	2500	13250
14	Հետադարձ լիցք, տոփանումով	մ ³	5.30	2500	13250
	ԸՆԴԱՄԵՆԸ				614950
1-7. Կաթսայատան արտաքին էլեկտրամատակարարում 0,4ԿՎ լարման ստորգետնյա մալուխային գիծ					
1	Մալուխ պղնձե ջիղով, մեկուսացված PVC ծածկույթով, տեղադրումով հատվածքը 5x10մմ ² BBԴԿ-1կվ	մ	40.0	7000	280000
2	Մալուխի ծայրային ամրակցում, տեղադրումով KBՅՄ-2,	հատ	10.0	500	5000
3	Ալյումինե ծայրակալ, տեղադրումով	հատ	10	500	5000
4	Պոլիէթիլենային էլեկտրատեխնիկական գոֆրե խողովակ $\Phi 25$	մ	40.0	250	10000
5	Երկաթակապ, տեղադրումով	հատ	15.0	50	750
6	Եռաֆազ ավտոմատ անջատիչ 40Ա (առկա մերանցումային վահանակում տեղադրելու համար), տեղադրումով	հատ	1	8800	8800
	ԸՆԴԱՄԵՆԸ				309550
1-8. Դատական դեպարտամենտի (4հարկ)՝ Զեռուցման համակարգի քեղմամատակարարման խողովակների միագնաց սխեմա					
1	Փական $d=50$, տեղադրումով	հատ	6	12000	72000
2	Պոլիպրոպիլենե խողովակ ալյումինե շերտով, տաք ջրի համար $d=63$ PN20 լվացումով, փորձարկումով, տեղադրումով	մ	120	6100	732000
3	Առկա պոլիպրոպիլենե խողովակների ապամոնտաժում $d=63$	մ	80	200	16000
4	Առկա պոլիպրոպիլենե խողովակների կտրում $d=63$	հատ	2	200	400
5	Առկա պոլիպրոպիլենե խողովակների խցափակում $d=63$	հատ	2	1000	2000
6	Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասեր, մոնտաժումով $d=63$ մմ	հատ	60	450	27000
7	Առկա գիպսաստվարաթղթե առաստաղի քանդում	մ ²	60.0	800	48000
8	Նոր կախովի առաստաղ հրակայուն գիպսաստվարաթղթից 12.5.0մմ, տեղադրումով	մ ²	60.0	9500	570000
	Գիպսաստվարաթղթի մետաղական կարկաս և կարկասի ամրացման հարմարանքներ				0
ա	Գիպսակարտոնի պրոֆիլ, արժեքը C	գմ	192.0	250	48000
բ	Գիպսակարտոնի պրոֆիլ, արժեքը U	գմ	24.0	200	4800
գ	Ինքնապտուտակ, արժեքը	հատ	1020.0	10	10200
դ	Թղթյա ժապավեն կարանների համար, արժեքը	մ	102.0	30	3060
ե	Ձգաճոպան հանգույցով, արժեքը	հատ	78.0	150	11700
զ	Կցորդ, արժեքը	հատ	36.0	100	3600
9	Անցքերի բացում պատերում $\Phi 160$ $t=0.5$ մ	հատ	10	100	1000
10	Մետաղական խողովակից պատյան $\Phi 100$ $t=0.5$ մ (10հատ), տեղադրումով	մ	5	2500	12500
	ԸՆԴԱՄԵՆԸ				1562260
Արտաքին գծեր					

6-1. Արտաքին ջրամատակարարում					
<i>Չողային աշխատանքներ</i>					
1	Ասֆ/բետոնե ծածկի կտրում	մ	64.0	300	19200
2	Ասֆ/բետոնե ծածկի քանդում հարվածահար մուրճով 30սմ ²	մ ³	3.0	3500	10500
3	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում, բարձունով ա/մ (ասֆ/բետոնե ծածկ)	մ ³	3.0	5000	15000
4	Տեղափոխում մինչև 15կմ հեռ.վրա	տ	6.0	900	5400
5	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում մեխանիզմով, բարձունով ա/մ	մ ³	33.0	1000	33000
6	Տեղափոխում մինչև 15կմ հեռ.վրա	տ	65.7	700	45969
7	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում ձեռքով	մ ³	5.0	1500	7500
8	Գրունտի բարձում ձեռքով ա/մ	տ	10.0	1500	14925
9	Տեղափոխում մինչև 15կմ հեռ.վրա	տ	10.0	1000	9950
10	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում մեխանիզմով, կողալիցքով	մ ³	14.0	800	11200
11	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում ձեռքով, կողալիցքով	մ ³	2.0	2500	5000
12	Բուսական շերտի կտրում h=20սմ	մ ³	4.0	1500	6000
13	Բնահողի բարձում, տեղափոխելով մինչև 50մ, կուտակում, պահպանում	տ	7.0	1500	10560
14	Պահպանված բնահողի տեղափոխում մինչև 50մ-ից	տ	7.0	2000	14080
15	Պահպանված բուսահողի վերականգնում	մ ³	4.0	2500	10000
16	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում δ=10սմ	մ ³	5.0	4500	22500
17	Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում, խտացումով δ=D _{խող} +20սմ	մ ³	13.0	4500	58500
18	Ավազախճային հիմնաշերտի իրականացում ,խտացումով h=15սմ	մ ²	30.0	5300	159000
